

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՀԱՄԱՅՆՔ	Ջրաշեն
ՄԱՐԶ	Լոռի



**1. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ**

Բնակիչների նախնիները գաղթել են Արևմտյան Հայաստանի Տարոնի գավառից, հիմնականում Մուշից, Բուլանուխից, Խնուսի գյուղերից, 1827-30թթ.: Սկզբում հիմնավորվել են 27 ընտանիք, որոնց շնչերի քանակը չի բավարարել՝ գյուղ գրանցվելու համար, և միայն 1830թ. -ին, երբ ռուս - թուրքական պատերազմի հետևանքով բնիկ հայրենիքից նոր ընտանիքներ են գաղթվել, միացել նրանց, բնակավայրը որպես գյուղ գրանցվել է և կոչվել է **Վարդնավ (Ռդդնավ)**, Անունը տարբեր կերպ է ստուգաբանվում. Վարդանավան կամ՝ Վարդ(ջուր) նավ: Ջրաշեն է վերանվանվել 1949թ. (որոշ ժամանակ կոչվել է նաև **Ջրաշատ**):

1884թ. –ին ավարտին է հասցվել տեղի Ս. Նշան եկեղեցու շինարարությունը, որը գործել է մինչև խորհրդային կարգերի հաստատումը, որին կից գործել է ծխական դպրոց: 1988թվականի երկրաշարժի հետևանքով եկեղեցին հիմնովին ավերվել է:

Խորհրդային շրջանում առաջին դպրոցները բացվել են երեսնական թվականներին, համեմատաբար մեծ սենյակներ ունեցող տներում, այնուհետև կառուցվել է յոթնամյա դպրոց: 1956թ. շահագործման է հանձնվել միջնակարգ դպրոցի շենքը:

Կոլտնտեսությունը ստեղծվել է 1932թ: 1972թվականից վերածվել է անասնապահական, ճականդեղագործական խորհրդային տնտեսության: Ջրաշենում էր Սպիտակի կարի արտադրական միավորման մասնաձյուղը, որը Լեռնավանի և Սարամեջի արտադրամասերով հանդերձ ուներ շուրջ 700 բանվոր ծառայող, գործում էր կապի բաժանմունք մոտ 500 հեռախոսային բաժանորդներով, կենցաղ - սպասարկման տաղավար, կինո, մանկապարտեզ, հիվանդանոց, մշակույթի տուն, գրադարան:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցել են 400 ջրաշենցիներ, նրանցից 228-ը չեն վերադարձել:

Արցախյան ազատամարտին մասնակցել են և կամավորական, և ժամկետային ծառայող զինվոր ջրաշենցիներ: Նրանցից 4-ը զոհվել են պատերազմական շրջանում կամ զինվորական պարտականությունը կատարելիս:

Փաստագրված տվյալներով, երկրաշարժից զոհվել է 247 ջրաշենցի, իրականում մոտ 270:

Այժմ գյուղն ունի 1103 ծուխ, 3624 բնակիչ: Ծնունդով ջրաշենցի են դոցենտ Էմիլ Մանուկյանը (ԵՊԳԱ դասախոս), Ժորա Բաղդասարյանը (ՎՊՄԻ դասախոս), Աշոտ Առաքելյանը (ՎՊՄԻ դասախոս), Ատոմ Մխիթարյանը, փոխգնդապետ Փայլակ Ուռուսյանը, բանաստեղծ Վաչիկ Մելքոնյանը, նախկինում ՀԽՍՀ գերագույն խորհրդի պատգամավոր Պարզիկ Բաղիկյանը, կրթության և գիտության փոխնախարար Ռոբերտ Ջարգարյանը և այլոք...

**2. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ**

Ջրաշեն գյուղը գտնվում է Լոռու մարզում, Սպիտակի նախկին շրջանի վարչական տարածքում՝ Փամբակի լեռնաշղթայի հյուսիս-արևմտյան լանջին: Սահմանակից է

Սպիտակ քաղաքին, Սարամեջ, Լեռնավան և Կաթնաջուր գյուղերին, Արագածոտնի մարզից՝ Լեռնապար, Սիփան, Գեղարոտ, Ջամշու և Ծիլքար գյուղերին: Ծովի մակերևույթից բարձր է 1700մ, վարչական տարածքը կազմում է 3738.66 հա:

Համայնքի զբաղվածության հիմնական ճյուղն է համարվում հողագործությունը, անասնապահությունը՝ թերի է զարգացած:

Ոչ գյուղատնտեսական գործունեությունը համայնքում թույլ է զարգացած:

Տարվա եղանակներից անհամեմատ լավն է աշունը, ձմեռը երբեմն խստաշունչ է, գարունը սովորաբար ուշացած է գալիս, իսկ ամառը զով է: Տարեկան տեղումները քիչ են, լինում է նաև կարկտահարություն:

Գյուղը գտնվում է ուժեղ սեյսմիկ գոտում, հաճախակի են լինում երկրաշարժեր:

**3. ՀԱՄԱՅՆՔԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

Մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը (մմ)	300-500
Օդի միջին ջերմաստիճանը հունվարին (°C)	-15-ից -20
Օդի միջին ջերմաստիճանը հուլիսին (°C)	20-ից 30

**4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Համայնքում ընդգրկված բնակավայրերը և դրանց հեռավորությունը համայնքի կենտրոնից	
1.1)	
1.2)	
1.3)	
2. Նախկին (ՀԽՍՀ) վարչական շրջանի անվանումը	Ջրաշեն
3. Համայնքի հեռավորությունը՝	
3.1) մայրաքաղաքից (կմ)	90
3.2) մարզկենտրոնից (կմ)	30
3.3) պետական սահմանից ուղիղ գծով (կմ)	120
3.4) նախկին շրջկենտրոնից (կմ)	10
3.5) միջպետական նշանակության ավտոճանապարհից (կմ)	0
3.6) երկաթուղային կայարանից (առկայության դեպքում) (կմ)	10
4. Համայնքի բարձրությունը ծովի մակերևույթից (մ)	1700
5. Համայնքի վարչական տարածքը (քառ. կմ/հա)	3738.66
6. Սահմանակից համայնքների անվանումները	Սպիտակ քաղաքին, Սարամեջ, Լեռնավան և Կաթնաջուր գյուղերին, Արագածոտնի մարզից՝ Լեռնապար, Սիփան, Գեղարոտ, Ջամշու և Ծիլքար գյուղերին

7. Համայնքապետարանի էլեկտրոնային փոստի հասցեն	jrashen.ori@mta.gov.am
8. Համացանցային պաշտոնական կայքի հասցեն	jrashen.am
9. Համայնքի ղեկավարի հեռախոսահամարը	094-37-10-00
10. Համայնքապետարանի հեռախոսահամարը	077-61-15-22
11. Համայնքի հեռախոսային կոդը	0255
12. Համանքում փոստային բաժանմունքի առկայությունը (այո, ոչ)	այո
13. Համայնքապետարանի փոստային դասիչը	18/21
14. Հաստատված գլխավոր հատակագծի առկայությունը (այո, ոչ)	այո
15. Քաղաքացիների սպասարկման գրասենյակի առկայությունը (այո, ոչ)	ոչ

**5. ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ**

	2018թ.
1. Մշտական բնակչության թվաքանակը	3548
2. Գրանցված ծնունդների քանակը	46
2. Մահացության դեպքերի քանակը	20
3. Ամուսնությունների քանակը	15
4. Ամուսնալուծությունների քանակը	-
5. Տնային տնտեսությունների թիվը	890
6. Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը	219
7. Կենսաթոշակառուների քանակը	410
8. Հաշմանդամություն ունեցող անձանց քանակը	162

**6. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

	2018թ.
1. Գրադարանների քանակը	1
2. Արվեստի դպրոցների քանակը	-
3. Երաժշտական դպրոցների քանակը	-
4. Նախադպրոցական հիմնարկների քանակը	-
5. Հանրակրթական դպրոցների քանակը	-
6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների քանակը	-
7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը	-
8. Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը	-
9. Մարզադպրոցների քանակը	1

**7. ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴ**

	2018թ.
--	--------

1. Համայնքի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը (մ <sup>2</sup> )	70.300
2. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր թիվը	1
3. Բնակելի տների (առանձնատների) ընդհանուր թիվը	503

**8. ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ**

	2018թ.
1. Հողեր, ընդամենը (հա)	3738.66
2. Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա)	3091.35
3. Բնակավայրերի ընդհանուր տարածքը (հա)	266.60
4. Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը	903
6. Մանր եղջերավոր անասունների (ոչխար և այծ) գլխաքանակը	238
7. Խոզերի գլուխաքանակը	46
8. Գյուղատնտեսական տեխնիկա	
8.1 տրակտորներ (քանակը)	-
8.2 կոմբայններ (քանակը)	-
9. Գյուղացիական տնտեսությունների թիվը	843

**9. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ**

1. Էլեկտրական ենթակայանների քանակը	11
2. Համայնքում գազիֆիկացման առկայությունը (այո, ոչ)	այո
3. Համայնքում աղբավայրի առկայությունը (այո, ոչ)	ոչ
4. Գերեզմանատան առկայությունը համայնքում (այո, ոչ)	այո
5. Համայնքային ենթակայության ճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	25
6. Կոմունալ և ճանապարհաշինական տեխնիկայի առկայությունը	-
6.1 Ինքնաթափ բեռնատար մեքենաների քանակը	-
6.2 Էքսկավատորների քանակը	-
6.3 Թրթուռավոր տրակտորների քանակը	-
6.4 Գրեյդերների քանակը	-
6.5 քանակը	-
6.6 Աղբատար մեքենաների քանակը	-
6.7 Բազմաֆունկցիոնալ կոմունալ մեքենաների քանակը	-
6.8 Վակումային փոշեկուլ մեքենաների քանակը	-
6.9 Ավտոաշտարակների քանակը	-
7. Համայնքի տարածքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	8
8. Համայնքի տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի առկայությունը (այո, ոչ) և դրանց քանակը	ոչ
9. Ներհամայնքային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	ոչ

**10. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ**

**Համայնքի վարչական բյուջեի եկամուտներ (հազ. դրամ)**

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը եկամուտներ	79978.3	83609.9
2. Հարկային եկամուտներ, ընդամենը այդ թվում՝	9730.4	13563.7
2.1 հողի հարկ	5644.2	5177.7
2.2 գույքահարկ	3701.5	8013.5
3. Պաշտոնական տրանսֆերտներ, ընդամենը	69837.9	69837.9
3.1 դոտացիա	69837.9	69837.9
3.2 սուբվենցիա	-	-
4. Մուտքեր հողի օտարումից	-	66.6

**Համայնքի վարչական բյուջեի ծախսեր (հազ. դրամ)**

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը ծախսեր	79978.3	53801.3

**Համայնքի ֆոնդային բյուջեի եկամուտները (հազ. դրամ)**

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը ֆոնդային բյուջեի եկամուտներ	11764.2	11764.2

**Ֆոնդային բյուջեի ծախսեր (հազ. դրամ)**

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը ծախսեր	36100.0	25829.9

**11. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ**

1. Համայնքապետարանի աշխատողների թվաքանակը, մարդ որից՝	12
1.1 համայնքային ծառայողներ	7
2. Ապարատի պահպանման ծախսերը, ընդամենը (հազ. դրամ)	35622.1
3. Ավագանու անդամների թվաքանակը	9

**12. ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Հիմնախնդիրը	Ակնկալվող լուծումը
Ջրաշեն համայնքի փողոցների վերակառուցման աշխատանքներ	Նախատեսվում է վերանորոգել համայնքի 10-րդ փողոցի ճանապարհի պարվածքի և ծածքի ամբողջական 700մ հատվածը, որը անմխիթար վիճակում է: Երթևեկը ցածր է (հիմնականում երթևեկում են հարակից փողոցներ)

	<p>կամ այլընտրանք չունեցող փողոցների ազգաբնակչությունը), ջրափոսերից ազատվելու համար գրեթե ամեն փարի կատարվում են փոսալցման աշխատանքներ: Ծրագիրն իրագործելու դեպքում կունենա երկարաժամկետ ազդեցություն :</p> <p>Իրականացման արդյունքում այն կապահովի Երևանի մայրուղուց համայնքի տարածքով դեպի տարածաշրջանի թվով 12 համայնքներ ավելի բարեկարգ ճանապարհով երթևեկը , համայնքի թվով 200 տնտեսություն իրեն տեղաշարժը կիրականացնի բարեկարգ փողոցով: Փողոցը համայնքի գլխավոր փողոցներից է և այն կապում է համայնքի հարավ-արևելյան մասը դպրոցին, պոլիկլինիկային համայնքապետարանին:</p>
<p>Ջրաշեն համայնքի ճանապարհային էներգամարդյունավետ լուսավորության համակարգի կառուցում</p>	<p>Նախատեսվում է կառուցել համայնքի 10-րդ և 8-րդ փողոցի 13-րդ նրբանցքի ճանապարհի էներգամարդյունավետ լուսավորության համակարգ, որի երկարությունը համապատասխանաբար կազմում է 700 և 600 գծամետր:Վերոհիշյալ փողոցները լուսավորված չեն, սակայն համայնքի համար ունեն կենսական նշանակություն:</p> <p>Իրականացման արդյունքում այն կապահովի բնակչության լուսավորված և բարեկարգ ճանապարհով երթևեկն ու տեղաշարժը:</p> <p>Փողոցները համայնքի գլխավոր փողոցներից են և դրանք կապում են համայնքի հարավ-արևելյան, հարավ-արևմտյան մասերը դպրոցին, պոլիկլինիկային ,համայնքապետարանին:</p>
<p>Մանկապարտեզի գույքի</p>	<p>Մանկապարտեզը չի գործում , քանի որ անհրաժեշտ գույքով ապահովված չէ, գույքի ձեռքբերման դեպքում համայնքի շուրջ 50-60 սոցիալապես անապահով ընտանիքների երեխաններ կհաճախեն մանկապարտեզ:</p>
<p>Համայնքային կենտրոնի կառուցում</p>	<p>Համայնքապետարանը գործում է վազոն-տնակում,համայնքը չունի մշակույթի տուն, դահլիճ: Համայնքային կենտրոնի, մշակույթի տան և դահլիճի առկայության դեպքում կկազմակերպվեն բազմաթիվ միջոցառումներ,հյուրախաղեր,կգործեն</p>

	<p>երգի, պարի և թատերական խմբակներ ինչն էլ, կիսթանի համայնքի մշակույթային կյանքի զարգացմանը:</p>
--	--